

ԴԱՍ 6

ԲՈՅՍԻՆ ԾՂՈՒՄԸ ԵՒ ԱՃՈՒՄԸ

ԿՈՐԻՁ, ԿՈՒՏ, ՀԱՏԻԿ
ԿՈՐԻՁ



Երբ պտուղ մը կիսենք, ի՞նչ կը գտնենք անոր կեղրոնը:

Պտուղներ կան, որոնց կեղրոնը կարծր կորիզ մը կայ:

Կտրէ՛ դեղձի մը կորիզը:
Անոր մէջ կը գտնուի *հունտը*:

Հունտը կը թաղեն հողին մէջ, որպէսզի նոր ծառեր ծլին ու անին:





Գրէ՛ կորիզաւոր պտուղներու անուններ.

Four empty rectangular boxes for writing the names of seed-bearing fruits.

ԿՈՒՏԵՐԸ

**Պտուղներ կան, որոնք կարծր կորիզ չունին:
Անոնց կեղրոնը կը գտնենք մանր կուտեր:**



**Այս կիսուած պտուղին
կեղրոնը ի՞նչ կը գտնուի:
Տուր պտուղին անունը**

Քանի՞ կուտ

**Ներկէ՛ կապոյտ՝ եթէ պտուղը կարծր կորիզ
ունի: դեղին՝ եթէ պտուղին կեղրոնը
կը գտնուին մանր կուտեր:**



ՀԱՏԻԿ

Ցորենը, գարին, բրինձը, լուբիան, ոսպը եւ ոլոռնը *հատիկներ* են:



Ամբողջացո՛ւր. →

Գծէ՛ եւ ներկէ՛:

լուբիայի հատիկ մը —

ոլոռնի հատիկ մը —

Խումբերու բաժնել կուտերը:

Կուտերը կարելի է նաեւ ըստ իրենց գոյներուն խումբերու բաժնել:



Օրինակ



Ուրիշ ի՞նչ յատկութիւններու վրայ հիմնուելով կարելի է կուտերը խումբերու բաժնել:

Պնակի մը մէջ դիր վարի ցանկին համապատասխանող գանազան տեսակի կուտեր.


ա.— պնակին մէջ գտնուող կուտերը բաժնէ խումբերու, ըստ որոշ յատկութեան մը:

բ.— համրէ իւրաքանչիւր տեսակի կուտի թիւը եւ ներկէ սիւնակները:




Կուտերու թիւ

նսպ	լուբիա	ցորեն	բրինձ	նուշի կուտ	ոլոռն	խնձորի կուտ	ծիրանի կուտ

Հատիկները ի՞նչպէս կազմուած են:



Պիտե՞ս, ի՛նչ կայ հատիկի մէջ:



Մօտէն դիտենք լուբիայի հատիկը: Ան իր շուրջ կարծր կեղեւ մը ունի: Զմեկիով մը զգուշութեամբ հանենք այդ կեղեւը: Կը տեսնենք երկու ներմակ մասեր, որոնք իրարմէ դիւրաւ կը բաժնուին: Այդ մասերը բլթակ կը կոչենք: Բլթակներուն միջեւ կայ շատ փոքր բոյս մը՝ իր արմատիկով, պզտիկ ցողունով եւ ծալուած երկու տերեւիկներով, ասիկա սաղմն է:

Բոյսը ի՞նչպէս կը ծլի եւ կ'անի:

Լուրբիայի հատիկ մը դնենք խոնաւ հողի վրայ թաղարի մը մէջ: Քանի մը օր ետք կը տեսնենք, որ կեղերը նեղֆուստ է: Շուտով երկու բլթակները կը բաժնուին իրարմէ, սաղմին արմատները դուրս ելլելով դէպի վար կը ծնի:



Օրերու ընթացքին, սաղմին փոքրիկ ցողունը կ'երկարի եւ հատիկը կը բարձրացնէ իր հետ: Արմատիկը կը մտնէ հողին մէջ: Բլթակները կանաչ գոյն մը կ'առնեն: Կանաչ տերեւներ դուրս կու գան անոնցմէ: Այս տերեւները ցողունին հետ կը շարունակեն բարձրանալ, իսկ բլթակները հետզհետէ կը տկարանան եւ կ'իյնան:

Բոյսերը շնչաւոր են, անոնք կ'անին:


Անելու համար բոյսերը պէտք ունին սնունդի:
Բոյսեր իրենց սնունդը ստանալու համար պէտք
ունին հողի, օդի, ջուրի, արեւի լոյսի եւ ջեր-
մութեան:



Բոլոր բոյսերն ալ նոյն չափով պէտք ունին օդի,
ջուրի, հողի, արեւի լոյսի եւ ջերմութեան:

ԼՈՒԲԻԱՅԻ ՇՐՋԱՆԸ

Ամբողջացո՛ւր.— հատիկ, պտուղ, տերեւ,
ծաղիկ, արմատ, տունկ,
ցօղուն, հող:



Երբ լուբիայի հատիկ մը ցանենք եւ գայն խնամենք, ան կ'անի եւ կը վերածուի լուբիայի տունկի, որ կու տայ լուբիայի պտուղները: Լուբիայի պտուղին մէջ մենք կը գտնենք բազմաթիւ լուբիայի կուտեր:

Այս գետնախնձորէն նոր բոյս մը կրնա՞ք ունեցնալ:



Ցանկ գետնախնձոր մը եւ խնամէ գայն:
Փորձէ լաւ անեցնել:

Առանց հուստը կամ կուտը ցանելու, կրնա՞ք
նոր բոյս ունենալ:



Ի՞նչ կ'ընենք

Ի՞նչ կը տեսնենք



Ի՞նչ կ'ունենանք

Ամբողջացո՛ւր.

Պտղատու ծառերուն ծաղիկները կը վերածուին պտուղի:

Պտուղները իրենց կեդրոնը կ'ունենան կարծր մը, կամ մանր: Իսկ բրինձը եւ ցորենը կազմուած են:

Երբ լուբիայի կուտը ցանենք, կը ստանանք , իսկ երբ դեղձի կորիզը ցանենք, կը ստանանք:

Առողջ բոյս ունենալու համար պէտք է լաւ խնամել գայն: Բոյսը սնունդ ստանալու համար պէտք ունի,,, եւ

Ներկէ՛ այն բաները, որոնք
անհրաժեշտ են բոյսին անելուն
համար:

